մերձաւոր կողմերն կարգաւորեալ կը լուսաւորուին, սաստիկ անձրեւներուն եւ ձեան՝ հարկ կ՚ըլլայ կամ փակել՝ ըստ հեռաւորդի մթոյ մէջ նստիլ, կամ թողուլ որ ցուրտ կաթիլներն վրան կաթին։ Սակայն կ՚երեւայ թէ լուսոյն այսպէս նուազ ու տկար ըլլալն դիտմամբ կ՚ուզուի։

(Շարունակելի։)

## ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

### ՀՐԱԺԵՇՏ

*(Ալֆրէդ Ցեմիսոլնից:)*

*Դու պարզ սահմանքով դէպ ի ծով նոսեր*
*Եւ ծուլուեր կապոյտ կոհակների հետ, —*
*Բայց քո ափն, առուակ, ես չեմ զայ բընաւ,*
*Հրաժեշտ եմ տալիս քեզ արդէն յաւէտ:*

*Դու ոռոգելով դաշտեր ու մարգեր,*
*Կը փռուիս ինչպէս աղմըկոտ մի գետ, —*
*Բայց քո ափն, առուակ, ես չեմ զայ բընաւ,*
*Հրաժեշտ եմ տալիս քեզ արդէն յաւէտ:*

*Այստեղ ինչպէս միշտ կը չոշէ կաղնին,*
*Ջըրիդ մէջ բարտին կը ծըփայ վէտ վէտ,*
*Ծաղիկների մէջ կը բզզայ մեղուն . . .*
*Ես միայն այնտեղ չեմ լինի քեզ հետ:*

*Արծաթծամ լուսնակն ու թրթռուն շողերն*
*Այնտեղ ջըրիդ մէջ կը խաղան յաւէտ,*
*Ես միայն, առուակ, ափըդ չեմ տեսնի,*
*Ես միայն այնտեղ չեմ լինի քեզ հետ:*

* * *

### ԵՐԿՈՒ ՎԱՐԴ

*(Մ'աքս վալդաուից:)*

*Աւազի վերայ վշտատանջ, տրտում*
*Պառկած են երկու թարշամած վարդեր.*
*Արեւը վերջին ծիրանի ցոլքով*
*Ծածկում է նոցա գունատ թերթիկներ:*

*— Մեծ մատաղահաս հարսը զգուանքով*
*Իւր սիրատարփիկ կրծքին էր կըրում,*
*Երբ անհուն սիրով ու երջանկութեամբ*
*Նորա փափկասուն սիրտն էր բաբախում:*

*— Տըխուր անջատման սրտայոյզ ժամին*
*Խեղճ հարսի կրծքից պոկեց ինձ փեսան,*
*Երբ պառկած էր նա հանգիստ դագաղում,*
*Մոմերի լուսով, պաղ՝ որպէս արձան:*

*Աւազի վերայ վշտատանջ, տրտում*
*Պառկած են երկու թարշամած վարդեր,*
*Եւ նոցա գունատ թերթերի վերայ*
*Համգչում են մեղմիկ մուտքի նըշոյլներ:*

*ԹՐԳՄ. ԲՆՈՓՐԻՈՍ ԱՆՈՓԵԱՆ.*

*ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ.*



## ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

### ԺԱՄԱՑՈՅՑ



Ժամացոյցներուն հին պատմութիւնն իւր լրութեան հասաւ՝ երբ ճօճանակը գտնուեցաւ։ Ցայն վայր ժամացոյցները՝ թէեւ ցերկրորդական մասունս արուեստակերտ գործիքներ էին, այսու ամենայնիւ ժամանակն ուղղութեամբ եւ ճշդութեամբ չափելու տակաւին անկարող էին։ Վասն զի առանցքին կրկին մասերը զիրար շփելով իրարու ընթացից աւելի արգելք կը դնէին քան թէ կանոնաւորութեան նպաստ կը մատուցանէին։ Ընդհակառակն ճօճանակը, որուն շարժումները բնական հաստատ օրէնքէն առաջ կու գան, այսինքն ըստ օրինաց անկման մարմնոց, ազատ դիրից մէջ կախուած կը կատարէ իւր ընթացքն ազատ եւ անարգել։ Բայց հարկ էր նախ այս բնական օրէնքը յայտնել. որ եւ յայտնուեցաւ իսկ ի ձեռն իտալացի իմաստնոյն՝ հռչակաւորն Գալիլէոսի։ Ըստ ծանօթ աւանդութեան մը 1583ին երբ Գալիլէոս Փիզայի Մայր եկեղեցին կը գտնուէր, իր բոլոր բովանդակ մտադրութիւնը տեսանելի եւ շատ անտարբեր առարկայի մըն էր դարձուցած։ Առանց միտ դնելու նուիրական արարողութեանց եւ քաղցրանուագ երգոց, մոմոց լուսափիւռ փայլմանց եւ բարեպաշտ հաւատացելոց խուռն բազմութեան՝ Գալիլէոս իւր հայեցուածքով կը հետեւէր անընդհատ ձեղուանէն կախուած բազմաստեղնեան ջահի մը մեղմ շարժման։ Այս շարժման մէջ Գալիլէոս բնական օրէնք մը գուշակեց հաւաստեաւ, որուն մեկնութիւնն իւր